

Հաղորդագրություն

2023 թվականի հուլիսի 19-ին կայանալիք Դատավորների ընդհանուր ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրության վերաբերյալ

2023 թվականի հուլիսի 19-ին հրավիրված Դատավորների ընդհանուր ժողովին Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրությունը կազմակերպելու համար Դատական դեպարտամենտի ղեկավարի պարտականությունները կատարողի կողմից 2023 թվականի հունիսի 19-ին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 76-րդ հոդվածի 1-5-րդ մասերի կարգավորումների հաշվառմամբ, ծանուցագրեր են ուղարկվել Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թեկնածուի համար Սահմանադրությամբ և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված պահանջները բավարարող՝ Հայաստանի Հանրապետության մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների 22 դատավորի:

Մարզերի առաջին ատյանի դատարաններից ստացվել է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թեկնածուների 19 դիմում՝ իրենց անունները քվեաթերթիկում չներառելու մասին, ինչպես նաև՝ 3 դատավորի՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ:

Այդպիսով, 2023 թվականի հուլիսի 19-ին հրավիրված Դատավորների ընդհանուր ժողովին Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրության քվեաթերթիկում ներառված են ներքոնշյալ 3 թեկնածուները.

Հ/հ	Դատավորի Անունը, ազգանունը, դատարանի անվանումը
1.	Էդգար Հովհաննիսյան (Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան)
2.	Սուրեն Մնոյան (Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան)
3.	Վարդուի Հովնանյան (Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան)